

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

01.04.2020թ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ **Նախագիծ**) 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) Փոխկապակցված անձ - անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական, ժառանգ կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում տվյալ անձը, շարունակելով հանդիսանալ գույքի իրական շահատու, սույն օրենքի գործողության ժամկետից առաջ փոխանցել է գույքը կամ անձը ում տվյալ անձը սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք»:
2. Նախագծի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով՝

«10. Հայցի ապահովման կիրառման արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի կրած վնասները հատուցում է Հայաստանի Հանրապետությունը, եթե ուսումնասիրության արդյունքներով ներկայացված հայցը մերժվել է: Վնասների առկայությունը և չափը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան»:
3. Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասում «կորել է» բառից հետո լրացնել «կամ չի պահպանվել կամ անհնարին է ձեռք բերել» բառերը:
4. Նախագծի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով՝

«6. Սույն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապօրինի ծագում ունեցող գույքը կարող է բռնագանձվել միայն՝
 - 1) *պաշտոնատար անձանցից, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված հանցագործություն կատարած անձանցից.*
 - 2) *սույն մասի 1-ին կետում նշված անձանց հետ փոխկապակցված անձանցից, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածում նշված դեպքերի»:*

5. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Փոխկապակցված անձի կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե.

1) գույքը ձեռք բերելու պահին փոխկապակցված անձը չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին, և

2) գույքի դիմաց հատուցումն իրականացվել է օրինական եկամուտների օգտագործմամբ, եթե հատուցումը չի կատարվել անկանխիկ եղանակով, և

3) գույքի իրական շահառուն փոխկապակցված անձն է:

Սույն մասում նշված պաշտպանությունից չի օգտվում սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասում նշված անձի ընտանիքի անդամը:»:

6. Նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասի «այլ անձի» բառերը փոխարինել «սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում նշված անձի» բառերով:

7. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասը հանել: